

4.2.2. Մարդասիրական օգնություն

Ըստ ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների, 2017թ. հունվար-հունիս ամիսների ընթացքում մարդասիրական օգնության կարգով Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն են ներմուծվել 111469.1 հազ. դրամի ապրանքներ: Ստացված մարդասիրական օգնության 29.5 տոկոսը կազմել են դեղորայք և բժշկական տարբեր ապրանքները, 23.4 տոկոսը՝ տարբեր տեսակի ապրանքները, 21.8 տոկոսը՝ ապարատներ և սարքերը, 15.9 տոկոսը՝ զանազան շինանյութերը և այլն:

ԼՂՀ ներմուծված մարդասիրական օգնության ծավալն ըստ առանձին ապրանքախմբերի

	2016թ. հունվար-հունիս	2017թ. հունվար-հունիս	Հազ. դրամ/ Աճի տեմպ, %
Ընդամենը	256795,5	111469.1	43.4
<i>այդ թվում՝</i>			
Անասնաբուծության և բուսաբուծության ծագում ունեցող սննդարդյունաբերության արտադրանք	9788,5	-	-
Փայտեղեն և նրանից պատրաստված արտադրանքներ	18637,7	-	-
Նոր կոշիկ	2774,9	-	-
Հագուստեղեն, գլխարկներ, հովանոցներ	85,2	3260,3	38,3անգ
Նախկինում օգտագործված կոշիկ	-	403,2	-
Նախկինում օգտագործված հագուստ	-	4730,2	-
Ապարատներ և սարքեր	185,9	24272,4	130,6անգ
Մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմներ	26175,3	2184,2	8,3
Դեղորայք և բժշկական տարբեր ապրանքներ	94091,2	32868,8	34,9
Զանազան շինանյութեր	43910,1	17674,3	40,3
Տարբեր տեսակի ապրանքներ	61146,7	26075,7	42,6

2017թ. հունվար-հունիսին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ մարդասիրական օգնության ծավալը նվազել է 56.6 տոկոսով: Մարդասիրական օգնությունը ստացվել է ՌԴ-ից, Գերմանիայից, Ֆրանսիայից, Չինաստանից, ԱՄԷ-ից և Հայաստանի Հանրապետությունից:

ԼՂՀ ներմուծված մարդասիրական օգնության ծավալն ըստ երկրների

	Արժեքը, հազ. դրամ		Տեսակարար կշիռը, %	
	2016թ. հունվար-հունիս	2017թ. հունվար-հունիս	2016թ. հունվար-հունիս	2017թ. հունվար-հունիս
Ընդամենը	256795,5	111469.1	100.0	100.0
<i>այդ թվում՝</i>				
ՌԴ	168536,3	40571,7	65,6	36,4
Հայաստանի Հանրապետություն	82869,1	29595,7	32,3	26,6
Գերմանիա	61,6	17031,4	0,0	15,3
ԱՄԷ	-	16853,7	-	15,1
Ֆրանսիա	-	5596,8	-	5,0
Չինաստան	-	1819,8	-	1,6
Բելոռուս	4008,7	-	1,6	-
Նիդերլանդներ	1319,8	-	0,5	-

Մարդասիրական օգնության ծավալների դինամիկան (հունվար-հունիսին), ըստ տարիների, հազ.դրամ



